ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2012թվականի N 387-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ավագանին 2012թ. սեպտեմբերի 3-ի թիվ 191 որոշմամբ տվել է իր համաձայնությունը՝ «Բլդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սերվիտուտի իրավունքով տրամադրված Դիլիջանի Աբովյան փողոցի 2346.0մ երկարությամբ 16907.0քմ մակերեսով հատվածի շարունակությունը կազմող 389.0մ երկարությամբ, 2802.0քմ մակերեսով հողամասը «Բլդան» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նպատակով, սերվիտուտի /հողամասի սահմանափակ օգտագործման/ իրավունքով «Բլդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: Եվ այդ նպատակով սահմանվել է սերվիտուտի վճար տարեկան 37000 դրամ:

«Բլդան» փոքր հիդրոէլեկտրակայանը նախատեսված է կառուցել Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության թիվ 000073 ջրօգտագործման թույլտվությամբ: Առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. օգոստոսի 16-ի թիվ 1288-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Ջրային պետական կադաստրի ջրօգտագործման իրավունքի գրանցման թիվ 000088 վկայականը՝ տրված 19.07.2010թ.:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածի, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Աբովյան փողոցով նախատեսված խողովակաշարի անցկացման նպատակով, «Բլդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Դիլիջանի Աբովյան փողոցի 389.0մ երկարությամբ, 2802.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ սերվիտուտի /սահմանափակ օգտագործման/ իրավունք՝ 37000 դրամ տարեկան վճարով:
2. «Բլդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել հողամասի սահմանափակ օգտագործման /սերվիտուտի/ պայմանագիր, որը ենթակա է նոտարական

վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել «Բլդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ի դեմս տնօրեն Կ.Սահակյանի.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված հողամասի նկատմամբ սերվիտուտի իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 10
ք.Դիլիջան